

Վարդան Անեցուն և նրա բարձրարվեստ ներբողին նվիրված հոդվածում բանասիրության դոկտոր Ասատուր Մնացականյանը 1971 թ. գրում է. «Ո՞ւր են Անիի մանրանկարիչները, բանաստեղծները, գրիչները, մտավորականության այլ ներկայացուցիչներ: Անշուշտ, նրանց մի զգալի մասի հիշատակն ու հետքը մոռացության են մատնվել ժամանակի ու օտար բռնակալների ավերածությունների պատճառով. բայց մի մասին էլ պահպանվել ու հասել է մեզ՝ սպասելով ամբողջացման...»¹: Ցավոք, նման համապարփակ ամբողջացումը դեռ իրականություն չի դարձել, սակայն նախընթաց տասնամյակների մեր աշխատանքն ընթացել է այդ ուղղությամբ. առաջին հերթին ուսումնասիրել և ի մի ենք բերել Անիի ու մերձակա վանքերի ձեռագրական ժառանգությունը, հրատարակել ենք պատմիչ Սամվել Անեցու երկը (առանձին և հավելում-լրացումներով), անդրադարձել Անի-Շիրակի պատմության և մշակույթի զանազան հարցերին, առանձին գործիչների և այլն²:

Հայ պատմիչների երկերի ձեռագրերի ուսումնասիրության ընթացքում հնարավոր եղավ գտնել որոշ նոր գրիչ-հեղինակների անուններ: Վերջիններս ոչ թե առանձին մատենագրական երկեր են ստեղծել, այլ իրենց ընդօրինակած մատյաններում՝ պատմիչների երկերում, որոշ հավելումներ ու լրացումներ են կատարել, սակայն դրանք այնքան կարևոր են, որ իրավամբ այդ գրիչները կարող են միջնադարյան փոքր հեղինակների շարքին դասվել: Նրանցից երկուսը, դատելով գրված տեղեկությունների բնույթից, Անի-Շիրակ շրջանից են եղել:

Առաջինը Հայրապետ վարդապետն է, որը, հավանաբար, ապրել է 13-րդ դարում և ընդօրինակել է Մատենադարանի թիվ 1897 ժողովածուն, որի մեջ՝ Սամվել Անեցու ժամանակագրությունը: Հայրապետը բնագիրն օժտել է փոքրաթիվ, սակայն հետաքրքրական ընդմիջարկություններով: Նրա հիշատակագրություններում գրչության ժամանակի ու տեղի վերաբերյալ նշում չկա, միայն հիշում է իր երկու եղբայրներին՝ Կարապետին և Խաչատուրին³:

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Մնացականյան Աս., Անիի բանաստեղծ Վարդան Անեցին, Բանբեր Մատենադարանի, 1971, թիվ 10, էջ 261:

² Մաթևոսյան Կ., Անի քաղաքի գրչության կենտրոնը, «Պատմա-բանասիրական հանդես», 1988, N 1, էջ 132-137, նույնի՝ Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, նույնի՝ Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Եր., 2009, նույնի՝ Անի-Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածու), Եր., 2010, նույնի՝ Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Եր., 2015, Սամուել Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Եր., 2014:

³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Եր., 1984, էջ 905 (այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.):

Հայրապետ վարդապետը ոչ միայն մի քանի նոր տեղեկություններ է մուծել, այլև որոշ դեպքերում Սամվել Անեցու տեղեկություններին բացատրական բնույթի ավելացումներ է կատարել: Դատելով հիշատակարանում առկա որոշ արտահայտություններից՝ «շարագրեցի գոսսա ի շահ եւ ի յաւգուտ մանկանց եկեղեցոյ...», յիշեայ, ով պատուական վերձանող եղբայր...», ո՛վ աստուածասէր ընթերցող ուսմամբ»⁴, կարելի է ասել, որ հավելումների հեղինակը հենց ինքը՝ Հայրապետ վարդապետն է, որը «ուսմամբ» ընթերցողների գործը հեշտացնելու համար Սամվել Անեցու հայտնած տեղեկություններին փոքրիկ բացատրական ավելացումներ է արել: Օրինակ՝ Աշոտ Ա Բագրատունու թագավորության մասին 885 թ. աղյուսակում Սամվել Անեցին գրում է՝ «Աշոտ իշխանաց իշխան թագաւորեաց Հայոց ամս Ե(5)», իսկ Հայրապետ վարդապետը մանրամասնում է՝ «Աշոտ Բագրատունի յետ ԻԲ (22) ամի իշխանութեան, ի վերայ Հայոց թագաւորեաց ամս Ե (5): Սա առաջին թագաւոր ի Բագրատունեաց» (61ա): Կամ՝ 1124 թ. Անիի՝ վրացիների կողմից գրավման մասին պատմությունը Սամվել Անեցին սկսում է հետևյալ խոսքերով. «Ի բագում հինահարութեանց...», իսկ Հայրապետի ձեռագրում կարդում ենք. «Եւ աստանաւր առնու մեծագարն Դաւիթ զմայրաքաղաքն Հայոց զԱնի այսու պատճառաւ. Ի բագում հինահարութեանց...» (73ա):

Հայրապետ վարդապետի ձեռագրում առավել աչքի զարնողը Անի-Շիրակյին վերաբերող հատվածներում կատարված հավելումներն են: Հայտնի է, որ Սամվել Անեցին, կազմելով ժամանակագրությունը Աղամից մինչև իր օրերը, ընդհանրապես չափազանց համառոտաբան է, և իր իսկ բնորոշմամբ առաջնորդվել է «կարճ ի կարճոյ» սկզբունքով: Հայրապետը, շուրջ մեկ դար ավելի ուշ ապրելով, հարկ է համարել որոշ բաներ հավելել: Օրինակ, Մարմաշենի հիմնադրման մասին Սամվել Անեցին գրում է. «ՆԼԶ (987) Սկիզբն շինուածոյ մեծանուն... ուխտին Մարմաշինոյ ի քրիստոսասէր իշխանաց իշխանէն Վահրամայ»: Հայրապետի ձեռագրում կարդում ենք նույնը, միայն վերջում լրացումով՝ «...Վահրամայ, որ էր թոռն Ապուղամրի» (65ա): Անիի Ս. Փրկիչ եկեղեցու՝ հավանաբար երկրաշարժից փլվելու մասին Անեցին գրում է՝ «ՇԶ (1131) Փլաւ Ամենափրկիչ յԱնի ի մարերի ի ԺԵ (15)»: Հայրապետի մոտ ամսաթիվը չկա, սակայն ավելացված է եկեղեցին կառուցողի անունը՝ «Փլաւ Ամենափրկիչն յԱնի շինեալն յԱպլղարիփ մարգպանէն» (74բ):

Հայրապետ վարդապետի առավել ընդարձակ ու կարևոր ընդմիջարկությունը վերաբերում է Անիի պարիսպների ու Մայր տաճարի կառուցմանը: Այն ավելի ակնառու դարձնելու համար զուգադիր ներկայացնենք Սամվել Անեցու տեքստը և Հայրապետ վարդապետի հավելումներով հատվածը:

Սամվել Անեցի	Հայրապետ վարդապետ
Սմբատ շահանշահ որդի Աշոտոյ ամս ԺԳ (13): Իսկ եւ իսկ ընդ թագաւորելն Սմբատայ լիր	Սմբատ շահնշահ որդի Ողորմածին Աշոտոյ, սա ի սկզբան թագաւորութեան իւրոյ լիր արկեալ պարսպի քաղաքին Անոյ մե-

⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 905:

<p>արկեալ պարսպի քաղաքին Անոյ, բարձրաբերձ բրգամբք, եւ լայնատարած տեղեաք, յԱխուրեան գետոյն մինչեւ ցԾաղկոցաձորն կոչեցեալ վայր: Հիմնարկեաց զԿաթուղիկէն պայծառափառ ի նմին քաղաքի, զոր ոչ կարաց աւարտել վասն կանխաժաման մահու կենաց իւրոց:</p>	<p>ծատարած տեղաւք ընդարձակագոյն, քան զհին շինուածն, բարձրաբերձ բրգամբք հաստակառոյց վիմաւք ի կողմանէ ի կողն, յարեւելից հիւսիսոյ մինչեւ յարեւմուտս հիւսիսոյ տողս արկեալ շինուածոյն յԱխուրեան գետոյ մինչեւ ցԾաղկոցաձորն կոչեցեալ վայր:</p> <p>Դարձեալ նոյն թագաւոր Սմբատ Շահնշահ յետ շինուածոյ քաղաքին հիմնարկէ զԿաթուղիկէն պայծառափայլ ի նմին քաղաքի, չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն, յորում կայ ի քառակողմն կուսէ անկեանցն դրոշմ գծոյ անուան նորա, եւ ոչ կարաց աւարտել վասն կանխաժաման մահու կենաց իւրոց:</p>
---	--

Ինչպէս տեսնում ենք, Հայրապետը որոշ մանրամասներ է ավելացնում պատմիչի խոսքերին, որոնց մեջ կա նաև մի շատ կարևոր տեղեկություն: Ինչպէս հայտնի է, Սմբատի եկեղեցաշինական այս ձեռնարկը կիսատ մնաց նրա անժամանակ մահվան պատճառով, և այն շարունակվեց գահի վրա նրան փոխարինած եղբոր՝ Գագիկ Ա-ի կնոջ՝ Կատրամիդե թագուհու հովանավորությամբ: Ցայժմ մասնագետների համար անհայտ էր մնում, թե շինության մինչև որ մասն է կառուցվել Սմբատի ժամանակ: Եվ ահա Հայրապետն ասում է՝ աստիճանները (որ պիտի հասկանալ գետախարհիսիւր) և քարերի երկու շարք, նշելով նաև, որ այդտեղ գրվել է Սմբատի անունը («դրոշմ գծոյ անուան նորա»): Բարեբախտաբար Մայր տաճարի հյուսիսային պատի արևելյան անկյունում պահպանվել է այդ գրություններից մեկը՝ «ՄՄՊԱ[Տ]» որն, ի դեպ, հրատարակված է Անիի վիմագրերի՝ Հովսեփ Օրբելու կազմած պրակում⁵: Եթե մինչ այժմ անհասկանալի էր, թե ինչ է նշանակում այդ մենավոր անունը, ապա Հայրապետի բացատրության շնորհիվ ամեն ինչ պարզվում է, մանավանդ որ գրությունը գտնվում է գետնախարսիին հաջորդող քարերի երկրորդ շարքի վրա:

Այսպիսով, Հայրապետ վարդապետի հայտնած տեղեկության վրա հենվելով՝ կարող ենք ասել, որ Սմբատ Բ-ի ժամանակ գցված է եղել եկեղեցու հիմքը, կառուցված՝ գետնախարհիսիւն ու պատերի քարերի երկու շարքը՝ «հիմնարկէ զԿաթուղիկէն պայծառափայլ ի նմին քաղաքի՝ չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն...»: Ակնհայտ է, որ Անիի Մայր տաճարի մասին այսպիսի մանրամասներ հաղորդող գրիչը պիտի անպայման եղած լիներ տեղում, իր աչքով տեսած լիներ գրությունը: Հասկանալի է, որ նա գիտակցել է այդ փաստի կարևորությունը, դրա համար է մուծել իր ընդօրինակած մատյանում:

⁵ Դիվան հայ վիմագրության, պր. 1, կազմեց Հ. Օրբելի, Եր., 1966, էջ 36: Անվան վերին ձախ մասում անհասկանալի է միայնակ Ա տառի առկայությունը, իսկ անունից ներքև ևս մեկ տառ են գրել թերևս Դ:

Հետաքրքրական է նաև, որ Տրդատաշեն Մայր տաճարի շինարարությունն ավարտած թագուհու անունը Մամվել Անեցին նշում է «Կատրամիդե» ձևով (այդպես է նաև այլ պատմիչների մոտ), մինչդեռ տաճարի շինարարական արձանագրության մեջ գրված է «Կտրանիդե»⁶: Հայրապետ վարդապետը, թեպետ Անեցու ժամանակագրությունն էր ընդօրինակում, սակայն թագուհու անունը գրում է շինարարական վիմագրին հետևելով՝ «Կտրանիդե» ձևով:

Կարծում ենք՝ բերված նյութերը լրացուցիչ բացատրություններ չեն պահանջում՝ եզրակացնելու համար, որ Հայրապետ վարդապետը Անի քաղաքին և անիական իրողություններին քաջածանոթ մարդ էր և, ամենայն հավանականությամբ, Շիրակի բնակիչ:

Հաջորդ գրիչը դարձյալ 13-րդ դարում ապրած Յոհանն է (հիշատակարանում իրեն կոչում է «Յոհան գրիչ»), որն ընդօրինակել է պատմագրական երկերի մի բացառիկ արժեքավոր ժողովածու՝ Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրը, որը պարունակում է Մովսես Խորենացու Հայոց պատմության հնագույն ընդօրինակություններից մեկը (թերթ 2բ-135ա), Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի Պատմության (թերթ 137ա-242ա) և Արիստակես Լաստիվերցու Պատմության (թերթ 242ա-311բ) առայժմ հայտնի ամենավաղ օրինակները:

Այս մատյանում Յոհան գրիչը հիմնականում Ստեփանոս Ասողիկի և մասամբ Արիստակես Լաստիվերցու երկերի մեջ՝ լուսանցքներում, մի շարք հավելումներ է կատարել: Դրանց մեծ մասը հետագայի գրիչները մուծել են անմիջապես բնագրերի մեջ: Ձեռագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս Յոհանի կատարած ընդամիջարկությունները տարանջատել բնագրերից, միաժամանակ դրանց միջոցով պատկերացում կազմել Յոհանի ընդօրինակած մատյանի գրչության տեղի ու ժամանակի մասին: Հիշատակարաններից երևում է, որ գրիչը վանական միաբանության անդամ էր (հոգևոր կոչումը չի նշում):

Քանի որ ձեռագրի, գրչի և նրա կատարած հավելումների վերաբերյալ մենք նախկինում հանդես ենք եկել առանձին հրապարակմամբ⁷, այստեղ միայն կներկայացնենք նրա մի քանի ընդամիջարկությունները, որոնք հուշում են գրչի ապրած միջավայրի մասին: Յոհանի հավելումները հիմնականում գրված են լուսանցքներում, հազվադեպ գրասյունների միջև, վերաբերում են անմիջապես կից տեքստին, կամ ունեն տարբերանշան (փոքրիկ օղակի կամ լատինական v տառի նմանությամբ), որը կրկնվում է տեքստի համապատասխան մասում՝ ցույց տալով ընդամիջարկության գետեղման տեղը:

Կաթողիկոս Հովհան Մանդակունու (478-490) աթոռակալության մասին գրելուց հետո Ասողիկը նշում է. «Յայսմ ժամանակի երանելին Տեառնթագ, որ էր ի գաւառէն Արշարունեաց ի Կալոց գեղջէ՝ վկայեալ վասն Քրիստոսի քաջութեամբ՝

⁶ Դիվան հայ վիմագրության, սրբ. 1, էջ 35:

⁷ Մաթևոսյան Կ., Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն և կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-Է, էջ 102-112:

կատարեցաւ ի Զատմիհրն Հագարաւուխտոյ, ի գորավարէն Պարսից»⁸, որից հետո Յոհան գրիչը ձեռագրի ստորին լուսանցքում ավելացրել է. «Եւ շխարք սորա հանգուցան ի Շիրակ գաւառի ի գեղն որ Բեռնաւնս կոչի, յեկեղեցուջն որ Տեանթագ ասեն» (162բ):

Աստղիկի պատմության այն հատվածում, որտեղ ասվում է, որ Պարսից թագավորը. «ի ինորոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց գԴաւիթ Սահառունի, որ կալաւ զհագարապետութիւն Հայոց ամս Լ (30)», Յոհանը երկու սյունակների միջև ավելացրել է. «Ի Սրեն գեկեղեցին սա շինեաց» (165ա)⁹:

Պատմության այն հատվածում, որտեղ Աստղիկը նշում է, որ Աբաս Բագրատունի (929-953) թագավորը կառուցել է Կարսի եկեղեցին, Յոհանը ձախ լուսանցքում ավելացրել է հետևյալը. «Մա շինէ եւ զՓոքր Կաթողիկէն Անույ: Եւ զՍուրբ Գրիգոր, ի Քաղաքոյ դաշտին» (196բ): Անիի պատմության համար այս վկայությունը չափազանց կարևոր է, քանի որ այդ եկեղեցին՝ Փոքր Կաթողիկէն, փաստորեն, կառուցվել է մինչև Անիի մայրաքաղաք հռչակվելը: 953 թվականից հորը՝ Աբասին փոխարինած Աշոտ Ողորմածը 961-ին ոչ միայն Անին մայրաքաղաք հռչակեց, այլև այդտեղ թագադրվեց, մի արարողություն, որը կատարվում էր կաթողիկոսի ձեռքով՝ եկեղեցում: Դրանից հետո Աշոտը ձեռնարկեց քաղաքի առաջին պարսպի կառուցումը, բայց իր նստավայրում եկեղեցի չկառուցեց (ի տարբերություն Բագրատունի նախորդ և հաջորդ թագավորների), քանի որ իր հոր հիմնած եկեղեցին՝ Փոքր Կաթողիկէն, արդեն կար, և ինքն էլ այդտեղ էր թագադրվել¹⁰: Ինչ վերաբերում է Աբասի կողմից Քաղաքադաշտի Ս. Գրիգորը (Զվարթնոցը) «շինելուն», այն պետք է հասկանալ որպես նորոգում, որի մասին նշվում է նաև այլ աղբյուրում¹¹:

Յոհանի հաջորդ ընդմիջարկությունը վերաբերում է 998թ. Մամլան ամիրայի դեմ մղված Օմր գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ Անիի թագավորության վեց հազարանոց զորաբանակը գլխավորող զորավարների: Աստղիկը գրում է, որ հայկական զորաբանակը հանձնվել էր. «...ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ որդույ Գրիգորոյ, եւ Սմբատայ մագիստոսի որդույ Վահրամայ, եւ մարզպանին Աշոտոյ»: Այս հատվածից աջ, լուսանցքում, Յոհանն ավելացրել է. «Պահլաւունոյ որ զՄարմաշէն շինեց: Որ զԲգնէրն շինեց» (236ա):

⁸ Ստեփանոս Տարոնեցի Աստղիկ, Պատմութիւն տիեզերական, (բնագիրը պատրաստեց Գ. Մանուկեան), Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար, գիրք Բ, Եր., 2011, էջ 688 (այսուհետև՝ Աստղիկ, 2011):

⁹ Յավոք, Աստղիկի պատմության և՛ 1885 թ. հրատարակության մեջ (երբ Յոհանի մատյանը հրատարակչին հայտնի չէր), և՛ 2011-ի «Մատենագիրք հայոցում», Սրենի մասին այս հավելումը սխալ տեղում է դրված (Ստեփանոսի Տարոնեցու Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, Սանկտ-Պետերբուրգ, 1885, էջ 86, Աստղիկ, 2011, էջ 692):

¹⁰ Մաթևոսյան Կ., Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 155-158: Հատկանշական է, որ Աշոտ Ողորմածի որդու՝ Սմբատ Բ-ի Անիում կառուցած Մայր տաճարը աղբյուրներում սովորաբար կոչվում է «Մեծ Կաթողիկէ»:

¹¹ Յովսեփեան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 87, Կ. Մաթևոսյան, Անի, էջ 156, 338:

Գրիչը ցանկացել է նշել իրեն հայտնի փաստն այն մասին, որ Վահրամ Պահլավունին Մարմաշենն է կառուցել, իսկ Սմբատ Մագիստրոսը՝ Բազնայրը, այդ պատճառով երկու տվյալն առանձնացրել է վերջակետով: Բայց հետագայի ընդօրինակողներն այդ տողերը, որպես միասնական միտք, ներմուծել են բնագրի մեջ, այդպես էլ անցել է հրատարակություններին, որն, իհարկե, պատմականորեն սխալ է, քանի որ Մարմաշենն ու Բզներ-Բազնայրը նույն մարդը չի կառուցել: Մամվել Անեցու վկայությունից հայտնի է, որ Բազնայրի վանքը 1010 թ. կառուցել է Սմբատ Մագիստրոսը, իսկ Մարմաշենի վանքը, շինարարական արձանագրության համաձայն, Վահրամ Պահլավունին ավարտել է 1029-ին: Սա նշանակում է, որ 1004 թվականին իր պատմության շարադրանքն ավարտած Ասողիկը պարզապես չէր կարող այդ մասին նշել, իսկ Մատենադարանի թիվ 2865 ձեռագրի համապատասխան էջն էլ ցույց է տալիս, որ այդ հատվածը Յոհան գրչի կատարած հավելումն է:

Յոհանի մյուս հավելումը մեծ նշանակություն ունի Անիի ճարտարապետության պատմության համար: Ասողիկի Պատմության համապատասխան հատվածի վերնագիրը՝ «Յադագս շինելոյն Գագկայ արքային ի քաղաքն Անույ զեկեղեցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի» Յոհանը լրացրել է նույն կարմիր թանաքով, զարդագիծ շրջանակի մեջ գրված հետևյալ բառերով. «Տրդատ վարդապետ եկեղեցոյն» (241ա): Անիում Զվարթնոցի նմանությամբ կառուցված Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու ճարտարապետի վերաբերյալ չեն պահպանվել վիմագիր և մատենագրական այլ տեղեկություններ: Մասնագետները միայն ենթադրել են, որ ճարտարապետը կարող էր Տրդատը լինել, այժի առաջ ունենալով Ասողիկի Պատմության 1885 թ. հրատարակությունը, ուր Յոհանի ընդմիջարկությունն արտագրող գրիչները որոշ բառեր էլ իրենք ավելացնելով ստացել են Ստեփան Մալխասյանցի՝ տոնատակում բերած սույն գրառումը. «Ձ(եռագրեր)՝ որ անուամբ սրբոյն զեղորգեա. միդատ (ընթերցիր՝ տրդատ) վարդապետ եկեղեցոյն»¹²: Ինչպես տեսնում ենք, Յոհանը ոչ միայն ստույգ նշել է Տրդատի անունը, այլև նրա ճարտարապետ՝ «վարդապետ» լինելը:

Հաջորդ երկու հավելումը վերաբերում են Արիստակես Լաստիվերցու Պատմությանը: Առաջինը վերաբերում է Սարգիս Սևանցուն (կաթողիկոս՝ 992-1019 թթ., մահ՝ 1022 թ.), որի գործունեությունն ամփոփող մահվան մասին վկայող Արիստակես Լաստիվերցու գրած հատվածի մոտ Յոհանն ավելացրել է. «Գերեզման նորա ի Հոռոմոսի վանքն» (248բ):

Անիի՝ սելջուկյան գրավումը ներկայացնող հատվածի վերջում՝ աջ լուսանցքում, ավելացված է. «Երկրորդ Դավիթ թուականն ՇՀԳ (1124): Երրորդ Գեորգի թ. ՈԺ (1161): Ի ՈՁԵ (1236) թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս»¹³ (306 ա):

¹² Ստեփանոսի Տարօնեցույ Պատմութիւն տիեզերական, էջ 282: Ցավոք, այս հատվածի դեպքում Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրն անտեսվել է «Մատենագիրք Հայոցում», որտեղ Յոհանի ստույգ հավելումը բաց է թողնված, դրա փոխարեն հետագայի սխալ արտագրումներ են տեղ գտել տողատակում (Ասողիկ, 2011, էջ 827):

¹³ Յոհանի այս հավելումը նշված է Լաստիվերցու երկի գիտական հրատարակության տոնատակում, որոշ տարրնթերցումներով և առաջին թվականի սխալով՝ «ՁՀԳ» (Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցու, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Եր., 1963, էջ 136):

Յոհան գրիչն այստեղ Ալփասալանի (Ալփ Արսալան) կողմից Անիի գրավումը (1064 թ.) համարելով քաղաքի առաջին առումը, համարակալելով հաջորդները միանգամայն ճիշտ թվագրմամբ նշում է, որ երկրորդ անգամ Անին գրավել է Վրաց Դավիթ (Շինարար) թագավորը՝ 1124 թ., երրորդ անգամ՝ Գեորգին՝ 1161 թ., իսկ 1236-ին քաղաքը գրավել են թաթարները:

Յոհան գրիչի հիշատակարանները և Ասողիկի ու Արիստակես Լաստիվերցու երկերում նրա կատարած հավելումները, միմյանց լրացնելով, թույլ են տալիս որոշ ենթադրություններ կատարել ձեռագրի գրչության տեղի և ժամանակի վերաբերյալ:

Նախ, հենց վերջին հավելումը թույլ է տալիս որոշակի դարձնել գրչության ժամանակի ստորին սահմանը, որը 1236 թվականն է, քանի որ Յոհանը նշում է, թե այդ թվականին թաթարները գրավեցին Անին: Ժամանակագրական վերին սահմանը ավելի դժվար է որոշել, սակայն դատելով նույն վկայությունից, այն չի անցել մոնղոլների տիրապետության շրջանից: Յոհանի խոսքը թեև կարճ, բայց արտահայտիչ է՝ «Ի ՈՁԵ (1236) թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս»: Թվում է, որ գրիչը բնակիչն էր թաթարներից առնված այդ տիեզերքի, որի դժնի ու հոգեկեղեք մթնոլորտի արձագանքը կարելի է գտնել նաև նրա հիշատակարաններում: Կարելի է ենթադրել, որ Յոհան գրիչի ծանր հոգեվիճակը կարող էր ծնվել մոնղոլների տիրապետության առաջին տասնամյակներին՝ 1240-1250-ական թվականներին, որն էլ համարում ենք մատյանի գրչության մոտավոր ժամանակը:

Իսկ այն հարցը, թե որն է եղել Յոհանի բնակության տարածքը, կարող է պատասխան գտնել հավելումների պարունակած տեղագրական տվյալների միջոցով: Դրանցում մատնանշվում է, որ նահատակ Տեառնթագի նշխարները գտնվում են Շիրակ գավառի Բեռնոն գյուղի եկեղեցում (որը հենց Տեառնթագ է կոչվում), որ Դավիթ Սահառունին կառուցել է Սրենի եկեղեցին, իսկ Աբաս Բագրատունին կառուցել է Անիի Փոքր Կաթողիկեն, Վահրամ Պահլավունին կառուցել է Մարմաշենը, Սմբատ Մագիստրոսը՝ Բագնայրը, որ Տրդատը Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու ճարտարապետն է, Սարգիս Սևանցի կաթողիկոսը թաղվել է Հռոմում և, վերջապես, որ Ալփասալանից հետո Անին երկրորդ անգամ գրավել է Դավիթ թագավորը՝ 1124 թ., երրորդ անգամ՝ Գեորգին՝ 1161թ., իսկ 1236-ին թաթարները գրավել են Անին և ողջ աշխարհը: Դժվար է անգամ պատկերացնել, որ այս տեղեկությունները կարող էր փոխանցել, ասենք, Վասպուրականում, Սյունիքում, Գուգարքում կամ վերը թվարկված բնակավայրերից հեռու գտնվող մեկ այլ տեղում ապրող մի գրիչ: Սա զուտ Շիրակի, իսկ ավելի ստույգ՝ Անիի շրջանի բնակիչն հասու տեղեկությունների պաշար է, և կարծում ենք, թե Յոհանը Անիի շրջանում ապրած գրիչ էր: Հավանաբար նա գործել է Անիի մերձակա վանքերից մեկում:

Յոհան գրիչը հավելումները կատարել է հիմնականում հայրենի գավառի վանքերի ու եկեղեցիների մասին՝ իրեն հայտնի մի քանի տվյալներ պատմությանը փոխանցելու նպատակով (տեսնելով, որ դրանք չկան իր ընդօրինակած պատմագրքերում): Տեղեկությունների մի մասը նա կարող էր քաղել այլ հեղինակներից, ինչպես, օրինակ՝ Սրենի եկեղեցու կառուցողի հարցում՝ Հովհաննես Դրասխանա-

կերտցուց, Մարմաշենի ու Բագնայրի դեպքում՝ Սամվել Անեցուց: Սակայն, նրա հայտնած տեղեկություններից մի քանիսը՝ Անիի Փոքր Կաթողիկեի, Տրդատ ճարտարապետի՝ Գագկաշենը կառուցելու և Մարգիս Սևանցու թաղման տեղի մասին, առայժմ այլ աղբյուրներից հայտնի չեն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Սատենադարանի թիվ 1897 ձեռագրում Հայրապետ վարդապետի, իսկ թիվ 2865 ձեռագրում Յոհանի կատարած ընդմիջարկություններն ու հավելումներները թույլ են տալիս նրանց համարել Անի-Շիրակի շրջանում ապրած գրիչներ: Միաժամանակ նկատի ունենալով նրանց հայտնած տեղեկությունների կարևորությունը պատմական և մշակութային տարբեր հարցերի առնչությամբ՝ այս երախտավորներին իրավամբ կարելի է կոչել գրիչ-հեղինակներ:

ДВА НОВЫХ АВТОРА ИЗ ОБЛАСТИ АНИ

___ *Резюме* ___

___ *К. Матевосян* ___

Изучение рукописей Матенадарана позволило выявить имена двух писцов, труд которых примечателен тем, что в ходе работы над рукописью они внесли в исторические тексты столь существенные дополнения, что эти интерполяции позволяют назвать писцов малыми авторами. Двое из них, судя по характеру переданной ими информации, были из Ани-Ширакской области.

Первый из них вардапет (архимандрит) Айрапет, живший вероятно в 13-м веке, переписал Хронографию Самвела Анеци (Матенадаран N 1897). Он внес в текст некоторые интерполяции. Например, Самвел Анеци пишет что Мармашен основал князь Ваграм, Айрапет добавляет, что он был внуком Абугамра, а упоминая о церкви Спасителя в Ани, называет имя строителя – Аблгариб. Известно что строительство Анийского Собора было начато в годы правления царя Смбата, а после его смерти было продолжено царицей Катрамиде. Айрапет конкретизирует, что во время Смбата был заложен фундамент здания, стилобат и два ряда кладки камней, на углах которой было написано имя царя (одна надпись сохранилась до сих пор). Нет сомнений, что фиксирующий такие детали автор был на месте и видел все своими глазами.

Другой писец 13-ого века - Иоанн (Матенадаран N 2865) внес в текст истории Степаноса Таронаци и Аристакаеса Ластиверци интересные данные, опять же в основном по истории Ани-Ширака. Он сообщает, например, что царь Аббас построил малый Собор Ани, что Трдат является архитектором церкви Гагкашен Св. Григора в Ани, и что католикос Саркис был похоронен в монастыре Оромос. Следует отметить, что эти данные не сохранились в других источниках.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մաթևոսյան Կարեն Արտաշեսի - պ. գ. դ., Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Սատենադարան, E-mail: karenmatevosian@gmail.com